

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Մայիսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել նորմայի սահմաններում մի փոքր բացասական, կամ դրական շեղումով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 18-ին և 19-ին. Տավուշում +23...+25^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +30...+35^{0}C (Մեղրի՝ +36^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +25...+28^{0}C, Շիրակում՝ +17...+20^{0}C (Գյումրի՝ +23^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +20...+23^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23...+25^{0}C, Գեղարքունիքում՝ +20...+23^{0}C (Սեմյոնովկա՝ 16^{0}C), Լոռիում՝ +20...+25^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +29...+31^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +18...+21^{0}C, նախալեռներում՝ +21...+23^{0}C (Աշտարակ՝ +29^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 16-17-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում +6...+8^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0...+2^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +5...+7^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +8...+11^{0}C, նախալեռնային շրջաններում՝ 0...+4^{0}C, Շիրակում՝ -1...+3^{0}C (Աշոցք՝ -3^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -1...+3^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, Գեղարքունիքում՝ -1...+3^{0}C, Լոռիում՝ +2...+5^{0}C, Արմավիրում՝ +6...+8^{0}C, Արարատում՝ +7...+9^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -1...+1^{0}C, նախալեռներում՝ +4...+6^{0}C:



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 41-50մմ (141-208%), Լոռիում՝ 12-50մմ (30-161%), Տավուշում՝ 34-45մմ (150-155%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 35-40մմ (113-124%), նախալեռներում՝ 24-58մմ (109-232%), Գեղարքունիքում՝ 14-43մմ (61-205%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 25-53մմ (86-133%), նախալեռներում՝ 16մմ (80%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 40մմ (114%), նախալեռներում՝ 12մմ (86%), Արմավիրում՝ 11-26մմ (65-173), Արարատում՝ 15-24մմ (79-218%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 4-10մմ (13-56%), նախալեռներում՝ 10-11մմ (28-46%):

Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների

Ելնելով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) պաշտոնական կայք էջում տեղադրված վեգետացիոն ցուցիչի քարտեզից՝ մայիսի երկրորդ տասնօրյակում հանրապետությունում մշակաբույսերի աճն ու զարգացումն ընթացել է բազմամյա միջին ժամկետներում:

Շրջանների զգալի մասում վեգետացիոն ցուցիչը հասել է առավելագույն արժեքի:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ





















Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղատուների աճը, լեռնային շրջաններում՝ հնդավորների ծաղկումը:

Արարատյան դաշտում շարունակվել է բանաջարանոցային մշակաբույսերի սածիլումը, տեղ-տեղ առաջացել են լոլիկի և սմբուկի կողային ընձյուղները, առաջացել են խաղողի վազի ծաղկաբույլերը:

Նախալեռնային շրջաններում կարտոֆիլը ծաղկել է, լեռնային շրջաններում առաջացել են կողային ընձյուղները:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ցողունակալման և հանգուցային արմատների առաջացման փուլերում: